

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ՆԱՄԱԿ՝ ՈՒԻԿԼԻՖ ՀՈՒԷ

**Ուիկլիֆ** Հոլի երուսաղէմ եւ Հայոց վանք վանքի պատմական մասին գրած էինք սեպտ.ի բիւոլ: Հետեւեալը անոնց մեծաւորէն ստացուած զիրն է որ տեղի սղոյրեան պատճառաւ այս ամսու մնաց:—

### ՊԵՆՏ-ԼՈՍԻ ՇՈՒՆՆԱԿՆԵՐ

Ուկաթորդ. Ուիկլիֆ Հոլ  
9 սեպտեմբեր 1931

ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԻՍՏՐՈՒԿԱՆ ՏԵՂԱՊԱՆԻՆ

Պատրիարքարան Հայոց

ԵՐՈՒՍԱԿՆԵՐ

Զերդ Սրբազնութիւն

Յանուն Ուիկլիֆ Հոլի ուսանողներուն՝ մեծ հաճոյքը կ'ունենամ այսու մատուցանել Ձեր Գերապատուութեան մեր խորին շնորհակալութիւնները այն սիրալիւր ընդունելութեան համար՝ զոր Ձեր Սրբազնութիւնը շնորհեց մեզ՝ մեր երուսաղէմ գտնուած միջոցին:

Ձեր Գերապատուութեան եւ Ձեր Վանքին միաբաններուն մօտ մեր վայելած մտերմական յարաբերութիւնները կոչուած են ըլլալու տեսակ մը գեղեցիկ զարդարանք՝ մեր կեանքերուն խճանկարին մէջ: Ամէն նոր բարեկամ, կամ բարեկամներու շրջանակ, նոր գոհարով մը կ'ամբողջացնէ զայն: Մեզի, արեւմուտցիներու համար, քնականարար շատ հետաքրքրական եղաւ Հայաստանեայց մեծ եկեղեցւոյ կեանքի եւ զործունէութեան նկատմամբ զազափար մը կազմել եւ տեղեկութիւններ բաղելը Անոր հետաքրքրական եւ ներշնչող պատմութեան, եւ ամէն տեսակ զգուարութեանց առջեւ Անոր յարատուութեան մասին: Մեծ տպաւորութիւն կրեցինք նաեւ Ձեր վարժարանին մէջ կատարուած կրթական զործէն: Մենք կը զգանք թէ Հայոց հետ մեր ունեցած բարեկամութիւնը կարեւոր մէկ բաժինը կազմեց երուսաղէմի մէջ մեր անցուցած միամտեայ յոյժ արժէքաւոր եւ հաճելի ժամանակամիջոցին: Կը խնդրենք Ձեր Գերապատուութենէն որ հաճի ընդունիլ մեր յարգալից շնորհակալութիւններն ու երախտագիտութիւնը:

Զերդ Գերապատուութեան հնազանդ ծառայ  
(ստորագրութիւն)

Roger du Beauport Welshman

### ՈՒՆՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՌԱՄԼԷ

Պաղեստինի երկրաշարժէն ասդին (1927) Ս. Գէորգի Տօնին առթիւ աւանդական ուխտաւորութիւնը ղէպի Ռամլէի հայոց Ս. Գէորգ վանքը՝ դադրած էր, Վանքին գրեթէ քոյրորդին աւերելու եւ եկեղեցւոյն լրուած վիճակ մ'ունենալուն պատճառաւ:

Այս տարի Գեր. Տ. Սմբատ եպս.ի նախանձախնդրութեան հետեւանքով ուխտաւորութիւնը նորոգուեցաւ:

Հոկտ. 10 ին երուսաղէմէն մեկնեցան Գեր. Տ. Սմբատ Սրբազան եւ Հոգ. Տիրան Վարդապետ. Յապպէէն եկած էին՝ Վանքին Տեսուչը եւ տեղւոյն բահանան, երգեցիկ զպիրներով միասին:

Եկեղեցական ժամերգութեան եւ հսկման արարողութեանց նախագահեց Տ. Սմբատ Սրբազան, եւ կիրակի առաւօտ ալ պատարագեց եւ ներշնչուած քարոզ մը խօսեցաւ, ծանրանալով խաչի խմատին, սուրբերու օրինակելի կեանքին եւ Հյոց. Ուղղ. Եկեղեցւոյ զաւակներուն իրենց Մօրը հաւատարիմ մնալու պարտականութեան վրայ:

Երուսաղէմէն եւ Եաֆաջէն բազմաթիւ ուխտաւորներ, ինչպէս նաեւ տեղւոյն ամբողջ հայութիւնը եւ ոչ-սակաւ արարացի բրիտանոնեանք լեցուցած էին եկեղեցին եւ տարիներէ կ'ի վեր ամայացած Վանքը, անոր տարով տօնական ոգևորութեան երեւոյթ մը:

Վեց ոչխարներ մտաղղ նուիրուած էին բարեպաշտ հաւատացեալներու կողմէ, եւ ոմոնք ալ հոգացած էին եկեղեցւոյն պայծառութեան համար պէտք եղած ծախքերը: Վանքին Տեսուչը Հոգ. Տ. Ներսէս Վարդապետ ալ իր կարգին պէտք եղած խնամածութիւնը ցոյց տուաւ ուխտաւորները ընդունելու եւ զանոնք զոճ ձգելու համար:

Ռամլէի Վանքը անուանուած է Ս. Գէորգ՝ Լիւզի մէջ Ս. Գէորգի փառաւոր եկեղեցւոյն եւ նշխարաց դամբարանին մերձաւորութեան պատճառաւ:

Ս. Գէորգի օրը Ռամլէի եւ Յապպէի հայ բրիտանոնեաներուն համար ուրախութեան եւ միտքարուքեան օր մը եղաւ:

### Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Գ

● Երուսաղէմի Անգլ. Զօրաց Էրամասար Գրեղապետ Մանկավարժի եւ իր հիւրերը Ս. Յակոբեանց Վանքն այցելեցին հոկտ. 6-ին, եւ առաջնորդուեցան Մայր Տանար. ուր ընդունուեցան Պատր. Տեղապետ Սրբազանի կողմէ եւ ցոյց տուաւ անոնց եկեղեցական հնուրիւններ:

● Պատր. Տեղապետ Սրբազան հետն ունենալով Ա. Թարգման Տ. Պարգեւ վարդապետը. այցելեց Բաղաբիս Եկիպատական Հիւպատարար հոկտ. 9-ին, եւ իր շնորհակալութիւնները ցերեկայացուց Եկիպատի Վ. Լ. Խուսառ Ս. Թագաւորին Գանակալութեան Տարեկարծին առթիւ: Եղայկա ճեղկալ զճնուեցաւ, նոյն երեկոյն, այս առթիւ Վ. Լ. Խուպատար կողմանէ Բաղաբիս Հոսէլ Պալատին մէջ տուած քէլի հրաւերին:

● Պատր. Տեղապետ Սրբազան, հետն ունենալով Տ. Կիրեղ վարդապետը հոկտ. 20-ին Կառավարչատն երթալով շնորհակալեց Երուսաղէմի նոր կառավարիչ Վ. Լ. Խուպատար, ստացան մաղրամներ ընելով Նարին Վանքութեան յաջողութեան համար: Տեսակցութիւնը յոյժ սիրալիւր եղաւ եւ Վ. Լ. Խուպատար խոստացաւ ընծայել իր պակասութիւնը Վանքուց վերաբերելու եւէլ զործի մէջ, եւ յայտնեց թէ մտն փոխադարձ այցելութիւն պիտի սայ Պատրիարքարանին:

● Պատր. Տեղապետ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազան, հետն ունենալով Ա. Թարգման Տ. Պարգեւ վարդապետը 28 հոկտեմբերին այցելեց Բաղաբիս Զէլա-Սլովաքիոյ հիւպատարարին եւ շնորհակալեց նոյն պետութեան Անկալութեան Տօնի տարեգրքը: